

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդի
ձևավորելու մասին

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժինը (այսուհետ՝ ՍԱՏԲ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրում է հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է Խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը Խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները (հայտերը) կարող են ներկայացնել Ջերմուկի ՍԱՏԲ :

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

1. Սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ:

2. Սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրում:

Հայտագրման վարչնաժամկետն է 2018թ. մարտի 5-ը:

Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, փոստ 3702, Ձախափնյակ թիվ 2
մանկապարտեզի մասնաշենք,

հեռ(374 0287) 2-39-46, (098) 17-89-71

www.mss.am, djermukststg@norq.am

Ջերմուկի ՍԱՏԲ